

Հավելված 2

2022 թ. «02» «9»-ին

կնքված N ԴՏՊ-1160-11009/Մ պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N\_14\_**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

|  |   |
|--|---|
| Ծրագրի անվանում  | «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» |
| Դրամաշնորհի N  | ԴՏՊ-1160-11009/Մ  |
| Դրամաշնորհատու<br>կազմակերպություն                         | ՀՀ ԱՍՀՆ   |
| Դրամաշնորհառու<br>կազմակերպություն                         | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ                                       |
| Ծրագրի իրականացման<br>ժամանակահատված                       | 01.02.2022-31.12.2022   |
| Հաշվետու<br>ժամանակահատված                                 | 01.10.2022-30.12.2022   |
| Ներկայացման օր   | 20.12.2022  |
| Հաշվետվության<br>պատասխանատու (անուն,<br>ազգանուն, պաշտոն) | Նաիրա Առաքելյան,<br>ՀԿ Նախագահ  |

## 2. Բովանդակային հաշվետվություն

### 2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1

հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում)

շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու

ժամանակահատվածի համար:

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում.** Հաշվետու ժամանակահատվածում նոր շահառուների ներգրավում չի եղել, առկա են նախկին 8 շահառուների գնահատված կարիքները համապատասխան մեթոդաբանությամբ:
- **Սոցիալ-վերականգնողական անհատական ծրագրի մշակում.** Քանի որ հաշվետու ժամանակահատվածում նոր շահառուների ներգրավում չի եղել, նոր ծրագրեր չեն մշակվել, առկա են նախորդ 8 շահառուների անհատական սոցիալական ծրագրերը, որոնց հիման վրա մատուցվում են անհրաժեշտ պարապունքները և ծառայությունները:
- **Ամենօրյա պարապմունքների և ծառայությունների մատուցում.** Ըստ հաստատված ժամանակացույցի և անհատական զարգացման պլանների՝ շահառուներին մատուցվել է անհատական և խմբային անհրաժեշտ սոցիալական ծառայություններ, սոցիալական խորհրդատվություն, իրազեկման աշխատանքներ, համակարգչային դասընթացներ, օպերացիոն համակարգերի ծանոթացում, windows համակարգ: Ուսուցանվել է ստեղնաշարի ուսուցում, հրաման ստեղների նշանակությունն ու դերը, համակարգչային դասընթացներ օպերացիոն համակարգերի ծանոթացում, windows համակարգ, Microsoft Office ծրագրերի ուսուցում, փաստաթղթի

ձևավորում՝ հայկական տառերի ուսուցում կույր տպման մեթոդով, Microsoft Word փաստաթղթի պատրաստում՝ տեքստի ձևավորում, Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակների պատրաստում, համացանցի և թվային չափման միավորների մասին տեղեկատվություն, Android համակարգով աշխատող սենսորային էկրաններով սմարթ հեռախոսների ժեստերը ըստ նշանակության և ֆունկցիաների, հեռախոսահամարների գրանցում և խմբագրում, տեղորոշման հավելվածներ մասնավորապես, Getthere gps նավիգաթիոն համակարգ, Teamtalk առցանց հարթակի ուսուցում, վերջինս հնարավորություն է տալիս առցանց շփվել, ինքնակրթվել և մասնակցել տարբեր առցանց միջոցառումների, որոնք կազմակերպվում են հայ և օտարազգի տեսողական խնդիրներով անձանց կողմից, առցանց բանկի հավելվածի ծանոթացում, կենսաթոշակային քարտի հաշվի ստուգում, համացանցից էլեկտրոնային և աուդիո գրքերի ներբեռնում և ընթերցում, տարբեր ծրագրերի ներբեռնում, տեղադրում, մասնավորապես՝ Sound Forge: nvda կարգավորումներ և nvda-ի տեղափոխվող կրկնօրինակի պատրաստում:

Ըստ անհրաժեշտության պարապունքներն իրականացվել են տարբեր տեղերում: Շահառուները դրսում խոսքային ուղղորմամբ արդեն ավելի անկաշկանդ կարողանում են կատարել գնումներ, օգտվել բանկային ծառայություններից: Աշխատանքներ են տարվում միկրոտարածության մեջ տարածական կողմնորոշման զարգացման ուղղությամբ (սեղանի խաղ՝ բուրգ, X-O, մագնիսներով կոնստրուկտոր): Մեկ շահառու արդեն սովորել է բրայլյան այբուբենը, տարվում են աշխատանքներ, որպեսզի կարողանա լավ գրել, կարդալ սովորել: Այդ նպատակով հավաքվում են բրայլյան տառերով փոքրիկ տեքստեր և տրամադրվում շահառուին: Շահառուներից մի քանիսի մոտ արդեն նկատվում է դրական առաջընթաց սպիտակ ձեռնափայտի օգտագործման ժամանակ: Տիրապետում են ավելի վստահ, կարողանում են ձայնային կողնորոշիչներ օգտագործելով A կետից հասնել B կետ, օգտագործելով իրենց ստացած գիտելիքները և հմտությունները: Կատարվել են աշխատանքներ



քարտեզների պատրաստման և քարտեզների կարդալու հմտության ձևավորման ուղղությամբ: Աշխատանքները կատարվում են մագնիսների օգնությամբ մագնիսի տախտակի վրա:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.

- Ամսական 8 պարապունք
- SCS դասընթացներ շաբաթական 2 պարապունք
- Սպիտակ ձեռնափայտի ուսուցում շաբաթական 2 պարապունք
- Սոցիալական խորհրդատվություն ամսական 2 հանդիպում

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱԶԿ ՀԿ-ի սոցիալական էջում.

<https://www.facebook.com/reel/6002765789753812?fs=e&s=m>

<https://www.facebook.com/armavirdc/posts/pfbid0VH3p2kznFmLJ9jgcnMionuQsSV5M45PUWBbpAtAqW4971tm5wmWDYDLepgkku4fFI>

<https://www.facebook.com/ArmavirYouthHouse/posts/pfbid031GL2YTeRseoYCctRbpqMvDvkuoCeTYMXXZJ9Mmj8qDvCWJZhMw6Ud6EawzPEcbbjI>

<https://www.facebook.com/hayk.yan.712/posts/pfbid02yyDciNQdNYiNmV6yNfZ1zsd31wH69gq2jkdRDTHWyrdwHfzZSDZhR5acecHSkyCI>

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղաժ դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացման էական խոչընդոտներ չեն եղել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

- Շահառուների սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները հաղթահարելուն ուղղված աշխատանքներ
- Շահառուների՝ սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ
- Շահառուների՝ ինքնասպասարկման, կենցաղավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ
- Android համակարգով աշխատող սենսորային էկրաններով սմարթ հեռախոսների ժեստերը ըստ նշանակության և ֆունկցիաների կիրառում
- Շոշափելի տարրական գծային պատկերների, շոշափելի քարտեզների պատրաստում և կիրառում
- Սպիտակ ձեռնափայտի միջոցով այց ժամանցային վայրեր և սննդի կետեր:



Շահառուների ցուցակ.

|   | Անուն Ազգանուն     | Ծննդ.ամսաթիվ | Հասցե                       | Հեռախոս   |
|---|--------------------|--------------|-----------------------------|-----------|
| 1 | Ֆրանգույան Ֆրունզե | 04.10.2003   | Ք.Արմավիր, Երևանյան 23, 2   | 094707312 |
| 2 | Ավագյան Գոռ        | 13.12.2011   | Ք.Արմավիր, Սիլիկյան 2, 28   | 093745915 |
| 3 | Ավագյան Դավիթ      | 26.02.2010   | Ք.Արմավիր, Սիլիկյան 2, 28   | 093745915 |
| 4 | Թամոյա Ալիկ        | 10.08.2011   | Գ.Արտաշատ, 9-րդ փող, 12     | 077643831 |
| 5 | Մկրտչյան Սոֆիկ     | 22.05.1961   | Ք.Արմավիր, Ջիվանու 13, 26   | 093023147 |
| 6 | Էվանիսյան Գերասիմ  | 18.07.1961   | Ք.Արմավիր, Շահումյան 15, 32 | 093551745 |
| 7 | Սաֆարյան Ալբերտ    | 21.08.1998   | Գ.Հուշակերտ, 6-րդ փող, 4    | 094155445 |
| 8 | Զաքարյան Արշակ     | 26.07.2008   | Գ. Մրգաշատ 9-րդ փող, 46     | 077656057 |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- Սոցիալական աշխատողը մեկ շահառուի աջակցել է բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման հարցում, որի արդյունքում հաշմանդամության 3-րդ խումբը փոխվեց 2-րդ խմբով:
- Մեկ շահառուն, ով ուներ կեցվածքի և քայլքի հետ կապված խնդիրներ շարունակել է այցելել Արևածագ վերականգնողական կենտրոն: Ըստ անհրաժեշտության ստանում է կեցվածքի(կիֆոզ) հետ կապված շտկողական ֆիզիոթերապևտիկ ծառայություններ:
- Ծրագրի շահառուներից բրայան համակարգին տիրապետող շահառուն, շարունակել է իր գիտելիքները և փորձը մեր աջակցությամբ փոխանցել կրտսեր ընկերոջը, որն էլ ապահովում է երկու շահառուների շփման հմտությունների զարգացմանը և փոխհամագործակցության մթնոլորտի ձևավորմանը:
- Շահառուներից մի քանիսը ստացել են իրավաբանական խորհրդատվություն ԱԶԿ-ի իրավաբանի կողմից: Սոցիալական աշխատողը մեկ շահառուի համար Արմավիրի ՄՍԾ ներկայացրեց սոցիալական նպաստի փաստագրման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

- Ծրագրի մի քանի շահառուներ սոցիալական աշխատողի և տիֆլումանկավարժի հետ մասնակցել են ԱԶԿ ՀԿ-ի կողմից կազմակերպված հանրային քննարկմանը, նպատակը՝ վեր հանել զբաղվածության պետական ծրագրերի հանրային հաշվետվողականության առկա մեխանիզմների վերաբերյալ շահագրգիռ կողմերի մոտեցումները և դրանց բարելավման ուղղությամբ վերջիններիս առաջարկները:
- Կազմակերպվել էր այց «Արմավիրի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, որտեղ կենտրոն հաճախող երիտասարդների համար կազմակերպվել էր սեմինար-քննարկում, թե ինչպես վարվել, երբ տեսնում են չտեսնող անձի: Համագործակցության, փորձի փոխանակման նպատակով հրավիրվել էր «Լիարժեք կյանք» ՀԿ-ի տիֆլումանկավարժ Ալլա Սահակյանը: Ծրագրի շահառուները օրինակով ցույց տվեցին տարբեր իրավիճակներ և ճիշտ լուծումներ սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու ժամանակ:
- Սպիտակ ձեռնափայտի միջազգային օրը այցելեցինք Հարբժշկական հայկական ասոցիացիա, որտեղ ասոցիացիայի և Հայ Մայրեր բարեգործական ՀԿ-ի կողմից կազմակերպվել էր կլոր սեղան քննարկում: Քննարկման նպատակն էր գույքագրել այն հմտությունների և վերապատրաստումների թեմաների ցանկն ու բովանդակությունը, որոնք պետք է ունենան/անցնեն հաշմանդամություն ունեցող անձանց անձնական օգնականները՝ որակավորման գործընթացի շրջանակներում:
- Սոցիալական աշխատողը տիֆլումանկավարժի հետ միասին իրականացրեց սեմինար քննարկում ծնողների հետ, որի ընթացքում քննարկվեց ծրագրի դրական ազդեցությունը շահառուների կյանքում, նրանց մոտ գրանցված փոփոխությունները, ինչպես նաև առկա կարիքներն ու հետագա ծառայությունների անհրաժեշտությունը:

ԱԶԿ ՀԿ նախագահ



Ն. Առաքելյան